***380. ԲՌՆԱԿՈԹ.*** *Կիոյ կոչվող ավերակ եկեղեցու մոտ, գերեզմանաքարի վրա.*

Այս է շիրիմն հանգստեան պարոն Շահիկայ, որդի Վարհամայ եւ իւրոյ տիկնոյ, առաջնորդ գեղոյս, որ թերակատար ժամանակաւ փոխեցաւ ի ·ՔՍ եւ եթող գծնողսն իւր սուգ անմխիթար՝ յունէ նացեալ աշխարհիս...... թվ. :ՁՀԵ:

*Լալայան, Գ. 176*

***381. ԲՌՆԱԿՈԹ.*** *Կիոյ կոչվող ավերակ եկեղեցու պատին.*

Թ·վ. :ՌԾՄԳ: Ես Ածատուր վարդապետս շինեցի զայս սուրբ եկեղեցիս:

*Լալայան, Գ. 176*

## Դ Ա Ս Տ Ա Կ Ե Ր Տ

***382.*** *Գյուղամիջում, ավերակ եկեղեցու մոտ, մի սան դաշի տակ գրած տապանաքարի երեսին.*



ՌԱՑՄ՝ ԱՐԿ ՏԱՊԱՆԻ ԵՒ ՀԱՆԳԻՍՏ ԱՍԼԱՆԱՑ ՈՐ ԿԷՍՈՒԽՍՈՒՄՆ ԳՈԼՈՎ ԲԱՆՆ ԿԵՆԱՑ ՓՈԽԵՑԱՒ ԱՌ ԱՐԱՐԻՉՆ՝.

*Լուռանկ. տախտ.* XXXIX, 143

***383. ԴԱՍՏԱԿԵՐՏ.*** *գյուղամիջում ավերակ եկեղեցու մոտ ընկած մի քարի վրա. 2 տ.*



ԵՍ ՑՈՀԱՆԷՍԻ ՏԼԱՑ ՑԻՍԱՑԻ ԷՐԷՑՍ, ՄԱՐՈՑ....ԷՊԻՍԼԿՈՊՈՅՍ, ՄՈՎՍԷՍ ՎԱՐԴԼԱՊԵՏՅ. ԹՈՒՄԱՑ ՎԱԼՐՅՊԷՏ.

*Հավանաբար կոփածո քարերով շինված եկեղեցու մուտքի բարավոր է. միայն մեկ կրեսն է հարթ.*

*Լուսանկ. տախտ.* XXXIX 145

**384. ԴԱՍՏԱԿԵՐՏ.** *գյուղից դեպի հյուսիս մոտ երկու կիլոմետր հեռու, հին ճանապարհի եզրին կանգնած խաչքարի ներքևում. 7 տ.*




Ի ԹՎԻՍ ՀԱՅՈՑ ։ՉԿԹ։ | ԵՍ ԲԱՂՏԱՐ, ՏՆ ԿԱՌՆԱՑ, ԿԵՐԵՑԻ ՎԱՅԵԼԵՑԻ ԶԺԱՄԱՆԱԿ ԻՄ | ԵՒ ՈՉ ՈՒՆԷԻ ԶԱԻԱԿ. ԸՍՏ|ԱՅՍԱՑ ԿԱՆԳՆԵԼ ԶԽԱՉՍ Ի | ՓՐԿՈՒԹԻՒՆ ՀՈԳՈՑ ԻՄՈՑ.

## Գ Ե Տ Ա Թ Ա Ղ

**385.** *Գյուղամիջի եկեղեցու մուտքի հարավից կանգնեցրած գեղաքանդակ խաչքարի տակին. 5 տ.*




ԵՍ ՄԽԻԹԱՐ ԵՐ|ԵՑ ԿԱՆԳՆԵՑԻ | ԶԽԱՉՍ ԵՂ|ԲԱՒՐ ԻՄ...... ԹՎ. ։ՉԼ։

**386. ԳԵՏԱԹԱՂ.** *գյուղամիջի եկեղեցու մուտքին որպես բարավոր օգտագործված տապանաքարի վրա.*




ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՄԱՂԱՔԻԱ...

*Շարունակությունը պատի մեջ է։*

**387. ԳԵՏԱԹԱՂ.** *գյուղամիջի եկեղեցու մուտքի կամարակալ քարի վրա.*




ԷՍ ԵԿԵՂԵՑԻՍ ԿԵՂ ՇԻՆԵՑ ԹԻՎՆ ։ՌՃԺ.
։ՌՃԺԱ։ 1650.

*Թվականները գրված են անճիշտ։*

## Շ Ն Ա Թ Ա Ղ

**388.** *Գյուղամիջի եկեղեցու մոտ մի դագաղաձև տապանաքարի վրա.*

Անուն Այ, ես Մէլիք Դուլիս կանգնեցի զտապանս եղբօր իմոյ պրն Պարիքին. զհայրն իմ զէլինախաղէն, զմայրն իմ Թանգուլչիչին. եղբ(այրն իմ) Փիրճամ

*Լալայան, Գ. 160.*